



Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելեան

ՎԵՋ. ԿԱԹՈՂԻԿՈՍՍ

Խրիմեան Հայրիկ տակաւին կը մնայ երուսաղէմ: Աշխարհ գիտէ, և Ռուսական կառավարութիւնն ալ քաջ իրազեկ է թէ Խրիմեան Հայրիկ ուխտի չգնաց յերուսաղէմ, այլ յղեցաւ անդ իբրեւ յաքսոր, և կը մնայ անդ իբրեւ ի բանտի: Տարի մ'առաջ ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուեցաւ ազգին միաձայն քուէովն և ընտրութիւնն վաւերացաւ Զարէն, և թէ պէտ այժմ ռուսական հպատակ կը սեպուի և է աշխարհի հնազոյն ազգային եկեղեցւոյ հայրապետն, կը մնայ իւր աքսորավայրի մէջ՝ հազար կասկածներէ չըջապատուած: Զարին կառավարութիւնն ըզբաղեալ է, Սուլթանի կառավարութիւնն դժկամակ է, և այն միակ հայ պաշտօնեայն — Պատրիարքն — ում անկ է խընդրոյն լուծումն փութացունել իւր դիմումներով, այնքան անյօժար է որքան երկշուտ իւր այդ պարտք կատարելու:

Այս ալ մեր ներկայ անօգնական կացութեան գառնագին մէկ նշանն է:

* * *

Կ'երևի թէ Հայաստան չափի ունեւայ իւր ներկայացուցիչ Շիքակոյի կթոնական մեծ համաժողովին մէջ: Որքան և օտարաց ըսեմք թէ Հայ եկեղեցին հաւա-

ծեալ և սգաւոր է և ուստի չկրնար ներկայացուցիչ յղել ի Շիքակոյ, տակաւին մեք մեզ պարտիմք խոստովանիլ թէ մեր անճարակութեամբ և գուցէ Պատրիարքին դժկամակութեան ևս շնորհիւ՝ մեր ազգային եկեղեցին ծանօթացունելու պատուական առիթ մի կը փախցունեմք:

Մեք սովորած եմք մէկ կողմանէ օտարներն մեղադրել, և միւս կողմանէ՝ օտարաց համարումն ու համակրանքն չհելու առիթներն զանց ընել:

*
* *

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՏԵՆԸ ԽՍՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեան և Դրան հպակայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամէրիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց չըջափոխութիւն:

Մէկ օրինակի գինն է 20 սէնթ մէկ Փրանք — կանխիկ վճարելի:



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," ևն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ատենախօսութիւն ներսէս Պատրիարքի
յատենի Ազգային Ժողովոյ. — Ներսէս Պատրի-
արքի Ազգային քաղաքականութիւնն. — Մի-
նաս Զեյրազի Ազգային Քաղաքականութիւնն —
Նամակ Եգիպտոսէ — Ազգային լուրեր.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ՆԵՐՍԵՍԻ

Ս. ԱՐՔԵՎԱԾՈՎԱՆՈՍԻ

Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ

Յազգային Ժողովի Հայոց,
ի 21 Յուլիսի, 1878

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն)

Արեւելեան խնդիրն այլ ևս ուրիշ կեր
պով չէր կրնար լուծուիլ, այլ կամ, Աս-
տուած մի՛ արասցէ, բաժանմամբ, կամ
զանազան կարգի Ժողովրդոց համար յա-
տուկ ու մասնաւոր դրութեամբ վարչու-
թեան. և այս ըսել է՝ «Որոշել այն գա-
ւառները որոնք մէյմէկ ազգային յիշա-
տակաց կեդրոններ են, և որք ի հնումն
ազգի մը հայրենիքը կազմելով՝ գեռ այ-
սօր բնակութեան տեղի են մնացած նոյն
ազգին անհատներուն գո՛նէ մեծ մասին
ու վերջապէս բազմաթիւ են քրիստո-
նեայք, և անոնց վարչութիւնը յանձնել
այն ազգէն Գրիստոնեայ պաշտօնատարաց՝
անփոփոխ և անվթար պահելով վեհ. կայ-
սեր վեհապետական իշխանութիւնը. այս-
պէս՝ Պուլկարիա, այսպէս Յունական գա-
ւառք, այսպէս՝ Հայաստան. և մնացեալ
բոլոր գաւառաց մէջ անթերի պահել Տա-
ճիկ պաշտօնատարներով վարչութիւնը,
թէ և գտնուին հոն քրիստոնեայք, բայց
ուր չեն այն քրիստոնէից ազգութեան օր-
րանք, և ուր սակաւաթիւք են սոքա»:
Փաւառաց այս կերպ որոշումը՝ ըստ մեզ
բնաւ քաղաքական կերպարանք կամ հե-
տեանք պիտի չունենար:

Մեր Ազգային խնդրոյ այն մասն է
ահա՛ որ չէր լուծուած Այ-Ստէֆանօսի
Դաշնագրութեան 16րդ յօդուածի մէջ,
այլ և ոչ բոլորովին բարձի թողի էր ե-
ղած. զի ինչ որ ընդհանուր կերպով վար-
չական բարւոքում տրամադրած էր յօդ-
ուածն այն, հոն պիտի երթար յանգէր
վերջապէս, զի հոն էր բարւոք վարչու-
թեան խնդրոյն միակ կարելի լուծումը,
և այլ ամենայն լուծում անհաստատ ու
անիրաւ պիտի ըլլար: Եւ մենք ազգովին

պարտաւոր ենք այն պետական աւագ անձանց, որ Դաշնագրութեան այդ յօդուածը ստորագրեցին. և հոս բարեպատեհ առիթ կը գտնեմ այդ երախտագիտութիւնը յանուն ազգին յայտնել իրենց. և որոց մին այսօր՝ իր շրջահայեաց, խոհեմ ու ամօքիչ հանճարովը կը վարէ դժուար ու փափուկ պարագային մէջ այս երկրին ներքին ու արտաքին քաղաքականութիւնը:

Այս-Ստէֆանօսի Դաշնագրութեան 16դ յօդուածը երբ ձեռք անցուցինք, նոր ոգի առինք և աւելի եռանդեամբ սկսանք աշխատիլ: Մեր գործը չէր լինցած, այլ սկսած էր: Յայտնի էր որ Այս-Ստէֆանօսի Դաշնագրութիւնը ինչպէս որ էր՝ այնպէս պիտի չմնար. իր զանազան տրամադրութիւնքը Եւրոպական բովէն անցնելով փոփոխութիւններ պիտի կրէին: Մասնաւորապէս 16դ յօդուածն ալ անպատճառ փոփոխութեան ենթակայ պիտի ըլլար: Ինչ որ Եւրոպական քաղաքականութեան շահուց հետ սերտ առնչութիւն ունէր Դաշնութիւն հովտին ապագայ քաղաքական վիճակը, նոյն կերպով և թերեւս աւելի շօշափելի կերպով Եփրատայ հովտին ապագայ քաղաքական վիճակը առնչութիւն ունէր Անգղիական շահուց հետ:

Որչափ ալ անչափաւոր ըլլար և հայասէր միայն՝ այն զգացումը որ 16դ յօդուածին խմբագրութեանն առաջնորդած էր, Անգղիան պիտի տեսներ թէ այդ յօդուածը Եփրատայ հովտին մէջ նոր քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ոտորագործ տէրութեանց միոյն քաղաքական շահուց տեսակետին պատասխանել: Անգղիա պիտի չընդունէր զայս: Կամ յօդուածը վերցունելու պիտի աշխատէր, կամ փոխելու: Դիտմամբ կ'արտասանեմ վերցունել բառը, զի եղան քաղաքագիտաց շրթութունք՝ որ հնչեցին այս բառը, այլ անկարելի էր վերցունել. զի անմարդասիրութիւնը ու խժոժութիւնը անկարելի է Անգղիոյ ազատամիտ ազգին համար: Կը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով որ յօդուածը մնայ իբրև Հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար, և Հայկական խնդիրը չէզոքանայ, այսինքն լոկ Հայաստանի խնդիր ըլլայ:

Բայց մենք ալ մեր կողմէն պէտք էր

որ աշխատէինք, պէտք էր մեր մոռցուած անունը յիշեցնէինք՝ երբեմն մեզի հետ ապրող և այսօր կորսուած հին ու փառաւոր ազգերուն թողանցը Եւրոպայի մէջ. պէտք էր գիտնար Եւրոպա որ Հայ ազգը կը զգայ ինքզինքը և գիտէ իր իրաւունքը պաշտպանել: Խորէն սրբազան ուղեւորեցաւ ի Բէթէրսպուրկ, և Խրիմեան սըրբազան յԱրեւմուտս Եւրոպիոյ՝ իրեն թարգման ունեւալով ազգային երիտասարդութեան փայլերէն մին՝ որ իր նորահաս ու հասուն հանճարովը մեր Հայոցս ապագայ զեղեցիկ յոյսերը պատկերացուց Եւրոպիոյ առջեւ, ինչպէս Խրիմեան Սրբազան ալ Հայաստանի հին փառաց սուգը ու դժբաղդութեան մէջ համբերատար ազնուութիւնը կը ներկայացնէր իր դէմքին վրայ, ինչպէս Խորէն Սրբազան ալ հին յիշատակներով թրթռուն և նոր յոյսերով բարախուն սիրտը ազգին: Աստիք պատգամաւորք էին պաշտօնապէս ազգին կողմէն. իսկ ամեն Հայու պարտքն էր գործակցիլ իրենց, և իմ իրաւունքս էր այսպիսի պարագայի մէջ Հայութեան բոլոր զաւակացը դիմել, քանի՜ և ո՛ւր որ պէտք ըլլար: Որո՞ւն սիրտը Հայու անունով կը թրթռար և որ կարող կը զգար զինքը օգտակար ըլլալու ազգին, գործակցեցաւ հոս ինծի և հո՞ն ազգային պատգամաւորաց: Եւ զի ջանքն ընդհանուր եղաւ, ընդհանուր եղաւ նա՛ն և համակրութիւնը որ ամեն կողմէն սկսաւ ծնիլ ու բազմանալ: Օրագիրք թարգման եղան այս համակրական զգացմանց, պաշտպան կացին մեր դատին գրեթէ առանց բացառութեան ամենուրեք, ժողովրդական ակումբներ կազմեցան և քաղաքական բեմերն իսկ որոտացին մեր Ազգային խնդրոյն վիճաբանութեամբ: Կրնայինք ըսել թէ Եւրոպիոյ զգացումն ի մեր կողմն էր. զգացում, աւա՛ղ առաջուց գիտէի թէ այս դարուս մէջ շահը միայն կը խօսի և մանաւանդ Հահր միայն պիտի խօսի այն ծերացեալ ու գործոց մէջ կածրացեալ քաղաքագիտաց ակումբին մէջ՝ որ պիտի գումարէր ի Պէրլին: Այլ մենք շահն ալ ի մեր կողմ ձգած էինք: Բիչ մ'առաջ ըսի արդէն թէ ինչպէս:

Տէրութեանց Աւագածողովը գումարուած և արդէն մէկ քանի նիստ ըրած էին ի Պէրլին. ամեն կողմէ ամեն տէրութենէ յուսադրութիւնը ու պաշտօնական

խոստումներ ընդունած էի. յայտարարութիւններ թէ ինչ որ միւս քրիստոնեայ ժողովրդոց պիտի տրուի, պիտի տրուի նա'ն Հայոց. ձայն չունէին Հայերը և չէին կրնար ունենալ Աւագածողովին մէջ, այլ — մինչև այս աստիճան էին մեզի տրուած յոյսերը — մեծ և ազնուախոհ ազգի մը, Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն և առաջին լիազօր պետականը յանձն առած էր որ ինքն ներկայացուցիչ ու փաստաբան կանգնի մեր դատին Աւագածողովին մէջ, նա որ և կատարեալ հաւանութեամբ ընդունած էր մեր խնդրոյն ձևը, հոգին և գործնական եղանակը, ինչպէս որ առաջարկած էինք մեր պաշտօնական գրութիւններով:

Վերջապէս աւագագոյնն այն աւագաց և ճարտարագոյնն ի քաղաքագիտաց Նախագահն իսկ աւագածողովին, որ և մասնաւոր ուշադրութեամբ քննած էր մեր խնդիրն ու մեր գրերն ամենայն՝ և մասնաւոր հոգատարութիւն յայտնած առաջին մեր դատին համար, պաշտօնական կերպով ներկայացուց և օրակարգն անցուց մեծ Ժողովին Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին նամակը առ նոյն ինքն Նախագահն. Հայ պատգամաւորաց խնդրաշիւքը, Հայաստանի վարչութեան համար ծրագրեալ կառնոմագիրը և Հայաստանի վրայ վիճակագրական տեղութիւն մը:

Այսպէս ահա՛ ներելի էր մեր յուսալ թէ խնդիրը ի հիմանց պիտի քննուէր ու հիմնական պիտի ընդունէր լուծում: Այլ ճիշդ այս միջոցին երևան ելաւ գաղտնի դաշնագրութիւնը ընդ մէջ Թուրքիոյ և Անգղիոյ՝ Ասիոյ նկատմամբ:

Տեա'րք Երեսփոխանք. ինծի չպատկանիր քաղաքական տեսութեանց մէջ մտնելով ըսել թէ ո'րչափ յանցաւոր կրնան ըլլալ Հայերը որ չնախատեսեցին զայդ նոր քաղաքականութիւնը՝ զոր և ո'չ մէկ տէրութիւն Եւրոպայի մէջ նախատեսած էր, և որուն մէջ յայտնի չէ՝ տակաւին երեւակայութիւնը արդեօք կամ թէ հեռաւոր քաղաքականութիւնը աւելի՛ մեծ դեր խաղացած է: Այլ այն դաշնագրութիւնը՝ որ եթէ գործադրուի՝ անուրանալի բարիք մ'է Թուրքիոյ համար և Հայոցս համար ալ, արգելք չեղաւ որ աւագածողովն զբաղի Այսթնեֆանօսի Դաշնագրութեան 16դ յօդուածովը, բարեփոխէ գայն, չէզոքացնէ ու մէկ տէրութեան

թեան երաշխաւորութեան ու հսկողութեանը փոխակալ բաւոր մեծ տէրութեանց երաշխաւորութիւնն ու հսկողութիւնը դնէ, մինչդեռ միւս կողմէն ալ Թուրք — Անգղիական դաշնագրութեամբ՝ Անգղիոյ մասնաւոր պաշտպանութիւնն ապահովեալ էր Հայոցս համար. այլ արգելք եղաւ որ Հայ ազգին խնդիրը ամբողջապէս նկատողութեան առնուի:

Արդարեւ անկողմնակալ մտածութեան համար ակներև է որ եթէ Թուրք — Անգղիական դաշնագրութիւնը Ասիոյ քրիստոնեայ ժողովրդոց համար բարեկարգութեան ծրագիրը Անգղիոյ և Թուրքիոյ կառավարութեանց համաձայնութեամբ որոշուիլ տրամադրած չըլլար, Տէրութիւնք իրենք զայդ ծրագիր պիտի որոշէին:

Աւասիկ Պէրլինի դաշնագրութեան 61դ յօդուածը.

«Բարձրագոյն Դուռը կը խոստամայ, առանց այլ ևս յապաղելու գործադրել այն բարեւոյններն ու բարեմորոգումները, զորս տեղական պէտքերն կը պահանջեն Հայոց բնակած զաւառներուն մէջ, և ամենց ապահովութիւնն երաշխաւորել Զէրքէզաց և Քրդաց դէմ: Այս նպատակաւ ձեռք առած միջոցները պարբերաբար պիտի ծանուցանէ Տէրութեանց, որք ամենց գործադրութեանը պիտի հսկեն»:

Տեա'րք Երեսփոխանք, եթէ այս յօդուածը ցաւալի բան մ'ունի, այն է որ մեր խնդրոյն լուծումն ըստ մասին կը յետաձգէ. չկործաներ ազգին յոյսերը, այլ և չպսակեր նոյն հետայն: Եւ ո'ր ազգ կըրցած է յանկարծակի կերպով իր բաղձանաց ի կատար հասնիլ, դժբաղդութիւնն է միայն և մահ, որ յանկարծակի կրնան գալ անձի մը և ազգի մը վրայ. կեանքն ու բարեկեցութիւն յամր կը ձեւանան: Եւ ասոր համար է որ կ'անիրաւեն անոնք որ կ'ըսեն թէ «ինչո՞ւ սկսանք, եթէ պիտի չյաջողէինք. և թէ յայտնի էր որ պիտի չյաջողէինք». զի օր մը յաջողելու համար՝ այս օրէն սկսելու էր, և զի եթէ ապահով կերպով դիտնայի ալ առաջուց թէ պիտի չյաջողիմ բնաւ, դարձեալ պիտի սկսէի. և այն թող գրէր ինծի ազգս ի դատապարտութիւն:

Բայց ոչ ինքնին ձեռնարկեցի իսկ յայտ գործ, այլ յառաջ քան զիս և բուռ քան զիմն էր ազգին ընդհանուր փափաքը, և

ես պատգամ միայն ընդունած էի զայն փափաքն յառաջ վարելու: Արդ երկու կարգ առարկութիւնք կան որոնց ազգածցաւը կ'աւելնայ յիս իմ ցաւերուս վրայ. այս առարկութեանց մին է այն՝ թէ վասնզի քիչ խնդրեցինք, քիչ ընդունեցանք, թէ անկատար կերպով թարգման կացինք ազգին իղձերուն և թէ նոյն իսկ այն կերպով վարուեցանք դիտմամբ և խորհրդով՝ որ անկատար կերպով պսակուին այդ իղձեր: Այս առարկութիւնը ազգայնոց ուսմանց կողմէն է, և նոր ապացոյց մի կը հանդիսանայ այն չարեաց՝ որ ազգին գերութեան վիճակը գործած, յամառ անվստահութիւնը բնական յատկութիւն մ'ընելով ազգայնոց: Ահ, եթէ այդ խիզախ վճիռն արձակողը գիտնար թէ անոնք որ աշխատեցան վեց ամսէ ի վեր, աշխատեցան ա'յնպէս՝ որպէս ոչ երբէք աշխատած էին իրենց կեանքին մէջ ընծայելով ազգին համար զամենայն որ ունէին, որն իր հարստութիւն, ո'րն իր տաղանդ, ո'րն իր աղքատութիւն, և ամենքն իրենց աշխատութիւն. եթէ գիտնար թէ ինչպէս արհամարհեցին դժուարութիւն ու վտանգ, եթէ գիտնար թէ լաւ ևս համարեցան զոհել իրենց շահն ու անձը, քան թէ ինչ սուրբ հայրենասիրութեամբ վառուած էին առանց որ և է փառքի կամ համբաւոյ ակնկալութեան ո՛չ այժմ առ ապագայն, եթէ գիտնար՝ ինչ որ ես գիտեմ, խզմատանքին մէջ պիտի դողար այդ դատաւարտութիւնն արստասանելով:

Միւս առարկութիւնը օտարէն կուգայ մանաւանդ, զի չկայ հայ մը՝ որ վայդ առարկութիւնը կարենայ ընել. այն է թէ ինչ որ ձեր պատրիարքը ազգին խնդիրը կոչեց, այն իր հնարած խնդիրն էր, և ազգը չուներ մասնակցութիւն: Այդ օտարը չէ լսած Հայոց ազգին անվերջանալի աղաղակը այնքան տարիներէ ի վեր. և չէ լսած սոյն այս Երեսփոխանական Ժողովին յանուն Աղգին ինծի յանձնած պաշտօնը՝ զոր և կրկնեց ասկէ քիչ ժամանակ առաջ:

Եւ արդ՝ ահա՛ յայտնեցի ձեզի թէ ինչ ձեւով և ինչ բառերով ներկայացուցի Հայոց խնդիրն Եւրոպայի, և զոր կ'ամփոփեմ հոս սա'պէս. Հայոց վարչութիւնն Հայաստանի մէջ առանց քաղաքական փառասիրութեան զոր երբէք չենք ունեցած և չենք կրնար ունենալ, մեր վեհ. Սուլթանին հովանաւորութեանը և վեհապե-

տական իշխանութեան ներքեւ: Դո՛ւք, ազգային Երեսփոխաններ, ըսէ՛ք, դուք որ բոլոր ազգին քուէովն ընտրուած՝ կը ըզգաք ի ձեր սիրտ բաբախել սի'րտն ազգին, ըսէ՛ք, ազգին խնդիրն չէ՞ այն որ ներկայացուցի:

Ըսէ՛ք, պիտի ներէի՞ք ինձ որ լուռ մընայի. ըսէ՛ք, պիտի ներէի՞ք որ այնպիսի պարագայի մէջ ուր Թուրքիոյ Գրիստոնեայ Ժողովրդոց բազմը պիտի վճռուէր, Ձեր պատրիարքը անհոգ կենար. ըսէ՛ք, պիտի ներէի՞ք եթէ նոյն իսկ անյոյս և անապաւէն չդիմէի ազգաց Ժողովին՝ գէթ անոր համար որ Եւրոպայ գիտնայ՝ թէ Հայոց ազգ մ'ալկայ Արեւելքի մէջ. ըսէ՛ք, պիտի ներէի՞ք դուք և պիտի ներէին ինձ Նախնեաց հոգիք. Հայկէն մինչև վերջին մեր Լեոն, Լուսաւորիչէն մինչև ի վերջինքն ներսէս՝ ի շարս մեր ազգաշէն և ազգասէր կաթողիկոսաց, ըսէ՛ք, պիտի ներէին և պիտի ներէի՞ք եթէ խոչ և խուժ առ ոտն հարկանելով մինչև Եւրոպա չհասցունէի ազգին աղաղակը. Ըսէ՛ք, ըսէ՛ք, ձեր հանդիսաւոր քուէովը, ըսէ՛ք ձեր միաձայն քուէովը, զի միաձայն միայն կրնայ ըլլալ քուէն այս պարագայիս մէջ. Ըսէ՛ք, և ձեր քուէն թո՛ղ պատասխանէ այդ անհեթեթ և ազգութեանց առարկութեանն*:

Եւ սակայն ո՞ւր է կորուստը, ո՞ւր է այնքան աշխատութեանց և ջանից ապարդիւն մնալը, ո՞ւր է անյաջողութիւնը, ո՞ւր է դժբաղդութիւնը, ո՞ւր յուսահատութիւն: Վասն զի՝ առաջին անգամ Հայոց ազգին անունն անցաւ հանդիսաւոր դաշնադրութեանց մէջ՝ այդ է կորուստը. վասն զի՝ այդ դաշնադրութեամբ հարստահարութենէ ազատեցան հայերը, այդ է դժբաղդութիւնը. վասն զի՝ Հայոց ապագային սերունդը դրուեցան, այդ է մեր ջանից ապարդիւն ելնելը. և վասն զի՝ Եւրոպայի Ժողովուրդներն ու տէրութիւնները ճանչցան ու սիրեցին հայ ազգը, այդ է անյաջողութիւնը. և վասն զի՝ այս վայրկենիս որ կը խօսիմ ձեզի այս ազգային բեմին վրայէն, թերեւս մեծ ևս բեմերու վրայն հարցումներ կ'ուղղին Եւրոպայի կառավարութեանց՝ Հայոց նկատմամբ, այն է մեր լքումն ու յուսահատութիւն:

* Ազգային Ժողովն յետ ատենաբանութեան միաձայնութեամբ մեքոթեց քոյն օտարօտի առարկութիւնը:

Տեա՛րք երեսփոխանք, ըսի արդէն թէ մեր խնդիրն անմիջապէս և կատարելապէս չէ՛ իրականացած, և ասոր համար պարտք համարեցայ բողոքել հոս տէրութեանց դեսպանաց քով, և ի Պերլին լիազօրաց քով: Բողոքը տկարին իրաւունքն է, և շատ անգամ յուժապէտս կը գործածուի նա. այլ ո՛չ այս պարագային մէջ, զի արդիւնքն իսկ տեսնուեցաւ վերջին վայրկեանին, յօդուածին խմբագրութեանը մէջ: Այո՛, մեր խնդիրը ամբողջապէս չէ կատարուած. այլ մե՛ծ է արդէն ի՛նչ որ ստացանք Դաշնագրութեան այն յօդուածով, և մե՛ծ է՝ ո՛չ ոք կրնայ ուրանալ զայս և ես քան զայլ ոք աւելի նուազ՝ Անգղիոյ մասնաւոր պաշտպանութիւնը:

Մենք չենք յուսացած մեր զօրութեանը վրայ այդ պաշտպանութեան տալու համար այն ուղղութիւնը՝ զոր կրնանք փափաքիլ մեր ազգային խնդրոյն կատարմանը նկատմամբ. այլ իրողութիւնք զօրագոյն են քան զամենայն՝ և վճռաբար կը հրամայեն նոքա տէրութեանց քաղաքականութեան:

Անգղիոյ մեծ ազգին քաղաքականութիւնը՝ որուն յայտնի են շահերը, նպատակն ու համակրութիւն, կրնայ իսկըզբան այնպիսի ձև ու ոգի մը զգենուլ՝ որ իր յաւիտենական կղզին մշտնջենաւորապէս պատող ովկիանոսին պէս ինքն իրեն դէմ մարտնչելով թէ և չյոգնի, չպարտասի, այլ՝ զի պէտք է յաջողի, հա՛րկ պիտի զգայ վերջապէս նոր ոգի և նոր ձև առնուլ:

Իսկ մենք, Տեա՛րք երեսփոխանք, մենք յարատեւեմք մեր սկսած գործին մէջ: Այսպիսի գործեր ո՛չ մէկ օրուան մէջ, ո՛չ մէկ մարդու ձեռքով կրնան կատարուիլ: Պատրաստուինք մեր ապագային: Նախ չկմանք Ռոս, Հայաստան երթանք. Հայաստան դրկեմք ինչ որ ունինք ազգին մէջ բամբուս, տաղաւձաւոր, ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ. Հայաստան երթանք մեր դաստիարակներ ու ուսուցիչներ, մեր այնքան վառվռում երիտասարդներ. Հայաստան երթանք այնքան դժբախդ պանդուխտներ. ո՛չ ևս պիտի ըլլայ հոն ուով, սրածութիւն, ո՛չ ևս հարստահարութիւն, ո՛չ ևս կենաց և ընչից և պատուոյ առեւանգութիւն. ո՛չ ևս աշխատութեան խափանում: Ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին:

Անգղիոյ դրամատեսարք հո՛ն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թողերթան մեր դրամատեսարք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրունք. ընկերութիւններ՝ ամեն քաղաք և գիւղ. դպրոցներ հաստատելու համար. ընկերութիւններ՝ առևտրական յարաբերութիւններ հաստատելու համար. ընկերութիւններ՝ գործարաններ հաստատելու. Հնդկաստանէն, Անգղիայէն, Թուրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչև Պարսկաստանէն միանան ձեռք ձեռքի տան բոլոր Հասերը, և այն ատեն՝ թերեւս ես ալ ցաւագար ու անբուժելի հիւանդութեամբ վարակեալ, ի գերեզման իջած ըլլամարդէն, այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պոսկուած մեր այսօրուան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն և պիտի ընդգրկէ մեր սիրելի նախնեաց հոգիները...

ՆԷՐՍԷՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Ա.

Հայկական որոշ քաղաքականութեան մի յղացումն նախ և առաջ Ներսէս Պատրիարք ունեցած է: Հարկ էր նմա, անշուշտ եկեղեցական և քաղաքական կարգաց հայ երևելիներու հետ խորհրդակցութեամբ, քաղաքականութեան որոշ գծի մի հեռակի և ազգին պէտքերն ճշգիւ բանաձեւելառաջի եւրոպայի՝ 1878 ին, երբ Դրան քրիստոնեայ Հայաստան վիճակն միջազգային կարգադրութեանց առարկայ լինելու վերայ էր:

Մեծ շահեկանութիւն ունի քննել և ուսումնասիրել Ներսէսի քաղաքականութիւնն: Մեր առջև են նորա մեծ ատենախօսութիւնն և Հայաստանի ինքնօրինութեան այն ծրագիրն զոր նա ներկայացուց Պէրլինի վեհաժողովոյն: Տեսնենք ի՛նչ կ'ուզէր նա և ինչ միջոցներ գործածեց ստանալու համար զայն:

Ներսէս իւր խնդիր յստակ տրամաբանութեան վերայ հիմնած էր, և այնպի-

սի անկեղծ պարզութեամբ և խոր իմաստութեամբ կը ջատագովէր ազգին դատն որ ոչ մի տեբութեան ներկայացուցիչ անիրաւ կը գտներ, և ոչ իսկ Բ. Դուռն անհատատարման կը նկատէր զայն:

Պատրիարքին տրամաբանութիւնն ուսէր.—Հայաբնակ գաւառներն բարեկարգութեան կարօտ են, զոր կայորն ինքն կ'ընդունի—այդ բարեկարգութիւնն իրագործել հնար չէ այնպիսի կառավարիչներու ձեռքով որպիսիք ցարդ իրաց վիճակն յոռեգոյն գործելու միայն ծառայած են. ուրեմն պէտք է բարեկարգիլի հայ նահանգին համար. հայազգի ընդհանուր կառավարիչ մի կարգել և միջազգային յանձնաժողովոյ մի հսկողութեան տակ ի գործ դնել զկարեւորն:

Այս տրամաբանութիւն շատ անախորժ չէր եւ ոչ շատ յանգուգն կը թուէր նոյն իսկ Բ. Դրան այն ատեն երբ Պուլկարիոյ ինքիւն արիւննաներկ եւ ահաւոր թարմութեամբ իբրեւ վկայ կեցած էր հայ Պատրիարքին, հաստատելու թէ քրիստոնեայ հպատակաց հարստահարեալ վիճակն աղետաբեր կը լինի վերջապէս օսմանեան պետութեան: Ուրեմն Պատրիարքն ինչ որ կ'ուզէր յօգուտ իւր հօտին, կ'ուզէր զայն համարձակ իբրեւ յօգուտ օսմ. կայսրութեան միանգամայն:

Ներսէս գիտէր նաև թէ որպէս պիտի ներկայացունէր Հայկական ինքիւն անգլիական դեսպանին, Ֆրանսականին և մէն մի պետութեան ներկայացուցիչին:

Ներսէսի դիւանագիտական տաղանդին մեծ պատիւ կը բերէ այս ամենն, եւ մանաւանդ այն պարագայն թէ նա կրցաւ իւր պահանջումներ բանաւորի ծայրագոյն սահմաններն հասցունել՝ և տակաւին հաւատարիմ և համակրելի մնալ Սուլթանին:

Բ

Ի՞նչ էր Պատրիարքին յանուն Ազգին ինքիւն—

—Վարչային ինքօրինութիւն հայաբնակ գաւառաց համար: Ահաւասիկ այդ ինքնօրինութեան գլխաւոր գծերն—

ՆԱԽ, կը գծէ ինքօրինութեամբ օժտելի գաւառաց սահմանն, յորում կը

պարունակուին Կարին, Վան, Տիգրանակերտ, (հիւսիսային մասն) Արղընի, Սղեւրդ, (հիւսիսային մասն), հանդերձ Ռիզէի նաւահանգստովն որ Տրապիզունի, և Պաթումի միջև իյնալով պիտի ծառայէ ի դիւրութիւն վաճառականութեան և արտահանութեան:

ԵՐԿՐՈՐԴ, կը սահմանէ այդ մի քանի իռսակալութիւններէ բաղկացեալ երկրին ընդհանուր կառավարչին հանդամանքն:

Ընդհանուր կառավարիչն ազգաւ հայ պիտի լինի, և պարտի նշանակուիլ Բ. Դրան կողմանէ բայց (եւ այս շատ կարեւոր բայց մ'է) հաւանութեամբ երաշխաւոր Պետութեանց:

Նորա պաշտօնավարութիւն պիտի տեսէ հինգ տարի, լընթացս որոյ Դուռն իշխանութիւն չպիտի ունենայ պաշտօնանկ ընել զայն, բայց միայն երաշխաւոր պետութեանց հաւանութեամբ: Ընդհանուր կառավարիչն պիտի ունենայ դործադիր իշխանութեան ամեն իրաւունքներն. նա պիտի հաստատէ դատաւորներ, գումարէ ընդհանուր ժողով, նախագահէ այդ ժողովոյ, հսկէ նահանգին բոլոր վարչական գործոց վերայ, և անուանէ գաւառներու և գաւառականերս միւթէսարըֆներն ու գայմագամներ:

Կարին պիտի լինի ընդհանուր կառավարչին նիստն, և անդ Կեդրոնական Խորհրդարանն պիտի լինի ընդ նախագահութեամբ իւր: Խորհրդարանին անդամք տիտի լինին Ա. Եւմտական Տեսուչն, Բ. Հանրային Շինութեանց տեսուչն, Գ. Օրէնագէտ Խորհրդական, Դ. Հանրային Բանակի հրամանատարն, Ե. Քրիստոնեայ դպրոցաց ընդհանուր տեսուչն, Զ. Մահմետական դպրոցաց ընդհանուր տեսուչն:

ԵՐՐՈՐԴ, կը սահմանէ երկրին օրինաց և ինքնօրէն վարչութեան հանգամանքն: Քաղաքային և պատժական օրինագիրքն պիտի յօրինուի Եւրոպական արդարադատութեան սկզբունց վերայ: Կրօնական դաւանութիւններն հաւատարազատութիւն պիտի վայելին: Ընդհանուր ժողով մ'ալ պիտի կազմուի հետեւեալ կերպիւ—ամեն գաւառակ երկու նուիրակ պիտի յղէ գաւառին կեդրոնն, մէկ մահմետական և մէկ հայ, և սքա պիտի ընտրէն երկու խորհրդական իւրաքանչիւր Գաւառի համար: Այնպէս ընտրեալ ընդ-

հանուր ժողովն պիտի գումարի տարին մի անգամ Ընդ. կառավարչին նիստն եղող քաղաքին մէջ (ի կարին)՝ նահանգին տարեկան հաշուեցոյցն քննելու և տուրքերն բաժնելու :

Ընդհանուր եկամտից 20 առ 100 կայսերական գանձուն պիտի յանձնուի, և ուրիշ ծախքերն ալ զեղջեղէ յետոյ մնացեալ գումարին 80 առ 100 ճանապարհի և հանրային շինութեանց և 20 առ 100 կրթական գործոյն պիտի նուիրուին :

ՉՈՐՐՈՐԴ, նահանգին բարբարոս ցեղերու դէմ պաշտպանութեան համար որոշ միջոցներ կը սահմանէ : Պիտի լինի ոստիկանութիւն և զինուորութիւն. Զինուորութեան պիտի կոչուին Հայերն, բայց Գրգերն, Ձէրքէզներն, և այլ վրաքանակ ցեղեր չպիտի ընդունուին զինուոր : Զօրքն 4000 զինեալ մարդերէ պիտի բաւկանայ՝ ընդ իշխանութեամբ Ընդհանուր Հրամանատարի մի :

Գ

Վերի բովանդակութենէն կը տեսնուի թէ ծրագիրն, համեստ երևութի և փոքր բառերու ներքեւ որքան մեծ բաներ կը պարունակէր : Ինչ որ Հայաստանի համար կ'ուզէր, էր հաւասար այնո՞ր որ ապա Պուլկարիոյ շնորհուեցաւ, և մինչև անգամ աւելի ալ : Նէրսէսի ծրագիրն համաձայն՝ Հայաստան պիտի լինէր ինքնօրէն երկիր, թէ և հարկատու Սուլթանին, և պիտի ունենար հայազգի իշխան, զոր ծրագիրն, «Ընդհանուր կառավարիչ» կը կոչէ, ունենալով իւր զինուորական, ելմտական, կրթական, հանրօգուտ շինութեանց նախարարներն, որք «սեւտուչ» կը կոչուին : Նաև ինքնօրինութեան բարւոք և ապահով ընթացքին վերայ պիտի հսկէր միջազգային յանձնաժողով մի, այսինքն մեծ պետութիւնք հաւաքաբար, և ոչ թէ այս կամ այն փրկիչ կամ թեւարկու բարերար պետութիւն : Պուլկարիա, միւս կողմէն, պիտի ունենար ոչ-պուլկար իշխան մի, և Սուլթանին հարկատու լինելով հանդերձ՝ պիտի լինէր նաև Զարին խոնարհ ծառայն ու հնազանդ պաշտպանեալն . . . :

Ներսէս իւր ինդիր արդարացունելու համար ամեն հնարաւոր փաստ գործածեց : Վիճակագրութեամբ մի ցուցուց թէ ինքն-

օրինութեամբ օժտելի նահանգին բնակչաց մեծամասնութիւնն հայ է : Կարնոյ և Վանայ կուսակալութեանց բնակչաց ամբողջ թիւն 1,700,000 լինելով, դոցա 1,500,000 ն Հայ են և մնացեալն Թուրք, Քուրդ, Յոյն, Ասորի, Զազայ, Եգիպտ, և Գնչու : Տիգրանակերտի կուսակալութեան հիւսիւսային մասին համար ևս վիճակագրութիւնն նպաստաւոր էր Հայոց :

Վիճակագրութեան այս իրողութեանց հետ անուրանելի էին Հայոց հարստահարութիւնքն, հայ ժողովրդին դարաւոր հաւատարմութիւնն քրիստոնէական հաւատոյն, նաև աշխատասիրութիւնն, ուղիմութիւնն և մաքուր ընտանեկան բարոյականն, Ֆիզիքական լաւ կազմուածն և առողջութիւնն, որոց ամենն համակրելի կ'ընծայէին հայ Ազգին դատն :

Ներսէս շատ փաստեր ունէր ի ձեռին, բայց ազգին դատն համակրելի հանդիսացունող մեծ փաստ մի իւր իսկ անձնաւորութիւնն էր. երբ դեսպան մի կը տեսակցէր Պատրիարքին հետ, ոչ միայն փաստերէն կ'ազդուէր այլ և փաստաբանէն, և թերևս աւելի ևս փաստաբանէն քան փաստերէն : Օտարականն չէր կրնար չմտածել թէ այն ցեղն որ այսպիսի անհատներ կը հանէ իւր ծոցէ, ընդունակ ցեղ մի պէտք է լինի :

Ներսէս մեծ խոհեմութեամբ ընտրեց նաև իւր պատուիրակներն առ Եւրոպեան դահլիճս : Պատուիրակութեան պետն էր Խրիմեան Հայրիկ, Հայաստանի Հայութեան բարձրագոյն անձնաւորութիւնն ու լաւագոյն բացատրութիւնն Ֆիզիքական և բարոյական : պատուիրակութեան երկրորդ անդամն էր Խորեն Նարպէյ, որ եւրոպական մշակութեամբ զինեալ լաւագոյն հայ եկեղեցական մ'էր և ունէր պերճախօսութիւն հանդերձ քաջ հմտութեամբ Փրանսերէնի : Պատուիրակութեան քարտուղարն էր Մինաս Զերազ, որ փայլուն կերպիւր կը ներկայացունէր ուսեալ հայ երիտասարդութիւնն, և Ֆրանսացի ուսեալ երեստասարդի մի պէս կը գրէր ու կը խօսէր Ֆրանսերէն լեզուն, դիւանագիտութեան լեզուն : Թողունք այդ պատուիրակութեան թարմատարն եղող ուրիշ մէկ անձի յիշատակն : Յիշեալներն կենդանի, չօչափելի ջատագովութիւն մ'էին ինքնին և իրենց փաստերուն և բանից ոյժ և ազդուութիւն կը'նծայէին իրենց անձնական

արժանեօք և պէս պէս տաղանդներով :

Ներսէս այդ չափով ալ չչատացաւ : Նա ամեն հնարաւոր միջոցէ օգուտ քաղել աշխատեցաւ : Պատուիրակներն պաշտօնապէս կը գործէին, այլ ունէին ոչ-պաշտօնական աջակիցներ ու զօրավիգներ : Տիրար կարապետ Յակոբեան, մեր լոնտոնաբնակ հայրենակիցն, կը գրէր անգլիական թերթերու մէջ, կը խօսէր, կ'աշխատակցէր, և արժանացաւ յետոյ Պատրիարքին մասնաւոր օրհնութեանց : Սէթ Արզար, հայ վաճառականներ, Բ. Դրան հայ էֆէն-աիներ անգամ, ի մի բան՝ հայութեան ծոցին մէջ գտնուող ամեն ոյժ շարժեցաւ Ներսէսի հօր ներշնչման և ուժգին մղման շնորհիւ, և ահագին ճիգեր թափուեցան Հայաստանի բարեկարգութիւնն ապահով շաւղի մէջ դնելու՝ ինքնօրինութեան միջոցաւ :

Դ

Եւ սակայն, աւճառ, այս ամեն գերազոյն ճգունք և անխոնջ ջանադրութիւնք վրիպեցան նպատակէն . Պէլճինի Վեհաժողովն 61դ յօդուածն նետեց Հայոց առջև, որ՝ իբրև անբաւական, անմիջական բողոքոյ տեղի տուաւ Ներսէսի կողմանէ, և յետոյ բողոքովին մեռեալ առօր կարգ անցաւ՝ հակառակ պատրիարքի ջանից և Կ. Պոլսոյ մեծ պետութեանց դեսպանաց հաւաքական Ծանուցաբերին :

Հայրենասէր Պատրիարքն անհնարին աշխատանք գուն գործած էր, և իրեն աշխատակից ունեցած էր Աղգին լաւագոյն ռեժիսը, և սակայն յուսավրէպ եղաւ . նաև բովանդակ Աղգն որոյ սիրտ այնքան խնդալից յուսով տրոփած էր, և Ներսէս ի խոր սուգ համակեալ իջաւ գերեզման :

Ներսէսի քաղաքականութիւնն իմաստուն էր, միջոցներն աղնիւ և կամքն հաստատուն, — իւր յոյս և ազգին յոյս բանաւոր էր, ակնկալաւթիւնքն արդար էին, պահանջքն իրաւացի, և սակայն չյաջողեցաւ :

Ինչո՞ւ չյաջողեցաւ :

Աշխարհի վերայ շատ բաներ կը պատահին արդարութեան և քանաւոր ակնկալութեանց հակառակ, և յոյժ յաճախ կը պատահին : Այդ ընթացիկ, սովորական անարդար գէպերէն մին ալ Ներսէսի ջա-

նից անպտուղ մնալն էր :

Կը ցաւիմք, բայց չեմք զարմանար ադոր վերայ :

Կօրհնեմք՝ գլաւէրժ յիշատակելի անունն մեծ Պատրիարքին որ այն մեծ ժամուն սքանչելի գործունէութիւն ցոյց տուաւ և զարմանալի դիւանագիտական ճարտարութիւն :

Այժմ կը մնայ քննել և տեսնել թէ Ներսէսի քաղաքականութիւնն սուրէր ու է սրբագրելի կետ, և թէ ի՞նչ պէտք է լինին այն եղանակաւորութիւնք զորս այդ քաղաքականութիւն պարտի կրել հայկական իրաց և միջազգային կացութեան ներկայ պայմանաց մէջ : Զայդ պիտի փորձեմք նշանակել յետոյ : Նախ տեսնենք թէ ինչ է Մինաս Չերաղի քաղաքականութիւնը :

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԳԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա

Մեծ . Տիրար Մ . Չերագի ազգային քաղաքականութիւնն իբրեւ նշանաւոր գործիչի և Ներսէս Պատրիարքի քարտուղարի՝ կարեւոր և շահեկան է ճանաչել : Յորմէ հետէ սկսած է նա «ԼԱՌԱՄՆԻ» ի հրատարակութիւնն ի Լոնտոն, մի քանի անգամ պարգած է իւր քաղաքականութիւն, և մեք կարող եմք աստ ի մի յօդել ինչ որ մեր մեծայարգ պաշտօնակից հրատարակած է այլ և այլ առթիւ :

1891 Հոկտ. ի առաջնորդող յօդուածէն, որ «Աղգ . Քաղաքականութիւն» խորագիրն կը կրէ, կը դնենք առաջի ընթերցողաց հետեւեալ հական կտորներն .—

Բ

«ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անձնիւր ազգի համար կայ քաղաքականութիւն մի որ իւր ներկայ վիճակին և ինքնապահպանութեան ու յառաջագնաց զարգացման շահուցն ամենէն լաւ կը պատշաճի : Ո՞րն է այն քաղաքականու-

Թիւն որ հայ ժողովրդեան կամ մանաւանդ Թուրքիոյ Հայոց ամենէն լաւ կը յարմարի այժմու պարագայից մէջ:

Մեր կարծեօք, մեզ համար լաւագոյն ներքին քաղաքականութիւնն կը կայանայ անդու պահանջելու մէջ զգործադրութիւն այն բարեփոխանց և բարենորոգմանց գործ Դուռն խոստացած է մեզ Պէրլինի Վեհաժողովոյն մէջ, և զորս մեծ Պետութեանց ներկայացուցիչք ճշդած են իրենց հաւաքական ծանուցագրով՝ ի 7 Սեպտ. 1880: Մեր նպատակ չէ օսմանեան պետութեան կործանումն, և ոչ ալ բան մի չհաճած կը լինիմք մեր լուծն փոխելով: Հայք իրենց կենաց, պատուոյ և ստացուածոց ապահովութիւնն և իրենց վիճակի իրական բարուրդումն կը խնդրեն. և կը խնդրեն զայնս ոչ լոկ իրենց այլ երկրին բոլոր պարկեշտ և աշխատասէր ժողովրդոց համար, առանց ի բաց առնելու Թուրք ժողովուրդն, որ, թէև յիշխանութեանց աւելի լաւ պաշտպանեալ, ոչ նուազ նշաւակ է օսմ. պաշտօնէից կամայականութեանն ու անգթութեան: Հայք հաւասար արդարութիւն կը խնդրեն ամենուն համար, քանզի չեն կրնար հանդուրժել տեսնելու թէ ոճրագործներ, երբ միւսիւրման են կամ մանաւանդ կաշառք տալու կարող մարդիկ, գըրեթէ միշտ անպատիժ կը մնան, մինչ ըստոյգ մահ կայ միայ ամեն քրիստոնէի որ օրինաւոր անձնապաշտպանութեան հարկին տակ՝ սպաննած լինի միւսիւրման յարձակող մի: Հայք ամեն ուրեք կարգի և յառաջդիմութեան տարրն կը ներկայացունեն, և այդ է պատճառն որ ամեն երկրի մէջ լաւ ընդունելութիւն գտած են և մինչեւ անգամ Շահ Աբբաս բռնի փոխադրած է զայնս ի Պարսկաստան: Ի Թուրքիա, անոնք որ կը գործեն հողն, կը մշակեն արուեստներն ու արհեստներն, կը պահեն վաճառականութիւնն և ընուն պետական գանձն, Հայք իսկ են, և ոչ ամենեւին այն աւազակ Բրդեր և Չէրքէզներ որք այսօր այնքան շնորհք կը գտնեն յարքունիս Երլորդի: Հակառակ այս ամենուն, Դուռն չպաշտպաներ զայնս արեան ու կողովուտի ծարաւի վայրագ ցեղերու շահատակութիւններէն, և իւր կուսակալք անգթօրէն կը հալածեն ամեն լուսաւորեալ և ազգեցիկ Հայ, որպէս զի ժողովուրդն ահաբեկի՝ զրկուելով իւր ա-

ռաշնորդներէն ու պաշտպաններէն: Հայք կը գանգաւան ո'չ թիւրք գիւղացիներէն այլ թիւրք պաշտօնեաներէն որք աստի՛ իրենց քսակ պարարելու համար կը կեղեքեն հասարակաց հայրենեաց դաւակներն, և անտի՛ օտարիկ կը վաճառեն պետութեան քան զամենայն կենսական շահերն: Հայք պատրաստ են ձայնակցելու իրենց Թուրք հայրենակցած հետ ընդդէմ այն այլասեռեալ փաշայից որք յանապատ փոխարկած են քան զամենայն գեղափթիթ գաւառներն Թուրքիոյ, և որք զօսմ. պետութիւնն քաղաքակիրթ ժողովրդոց ծաղրին նշաւակ ըրած են:»

Չերազ ներքին քաղաքականութեան վերայ այդչափ խօսելէ յետոյ կ'անցնի արտաքին կամ միջազգային քաղաքականութիւնն պարզելու և կ'ըսէ. — «Գալով մեզ համար արտաքին լաւագոյն քաղաքականութեան, այն կը կայանայ մեր դատն այս կամ այն տերութեան ձեռքն գործի չընելու մէջ: Պարտիմք դիմել Անգլիոյ, Գերմանիոյ, Աւստրո-Հունգարիոյ եւ Իտալիոյ ճիշդ ինչպէս Ռուսիոյ եւ Ֆրանսայի, քանզի այս բոլոր տէրութիւնք ստորագրած են Պէրլինի դաշնագրին, ուր արձանագրեալ են մեր իրաւունք: Կ. Պոլսոյ մէջ գերակիւ եղող ազգեցութիւնն Ֆրանսեւուսականն լինի թէ Անգլիոյ երբեակ նիյակակցութեանն: մեզ համար տարբերութիւն չընեն: Մեր ձգտումնք այնքան համեստ են որքան մեր ուժեր, մեք կառավարութեանց արդարասիրութեանն ու մարդասիրութեան կոչում կընեմք, և կարելի է գտնել այդ զգացումներ այս կողմն ինչպէս և միւս կողմն: Ռուսիոյ բազկաց մէջ նետուել՝ կը լինի Անգլիոյ կասկածն հրաւիրել մեր վերայ, Անգլիոյ բազկաց ապաստանիլ՝ Ռուսիոյ սրտամտութիւնն մեզ դէմ գրգռել կը լինի:...

Եթէ պարտիմք զգոյշ լինիլ մեր դատն այս կամ այն տէրութեան ապաստան ընելէ, որքան աւելի զգոյշ պէտք է լինիմք երկրի մի այս կամ այն կուսակցութեան կցելէ:... (Անգլիոյ) ազատականք աւելի խոր համակրանք կը տածեն մեզ նկատմամբ, ինչ որ անսահման երախտագիտութեամբ կը խոստովանիմք, բայց երբ յիշխանութիւն վերագառնան, աւելի լաւ պիտի համարին հաւանականօրէն ի գործ մղել ուրիշ տէրութիւն մի մանա-

ւանդ քան անձամբ գործել: ... Այս շարժառիթներով՝ մեք հաստատապէս կը հաւատամք թէ Հայոց շահն կը պահանջէ չպաղեցունել մենէ պահանջողականներն, ազատկանաց հետ շատ լաւ յարաբերութիւն պահելով հանդերձ:

Հարկ է յաւելուլ թէ ներքին և արտաքին քաղաքականութիւնն զոր ուրուագրեցինք աստ՝ Ներսէս Պատրիարքի քաղաքականութիւնն եղած է, որ թրքական Հայաստանի համար ո՛չ անկախութիւն այլ վարչական ինքնօրինութիւն պահանջած է, և որ իւր պատուիրակներ յղած է հաւասարապէս առ Լորտ Սալզպլըրի և առ Տիար Կլաւսթըն, ի Բեդերպուրկ ու Փարիզ, և ի Լոնտոն՝ ի Պէռլին՝ ի Վիէննա և ի Հռովմ: «ԼԱռմէնի» որ բնաւ չեղած չէ այս քաղաքականութենէ, կ'աշխատի զՀայկ. ինքնօրինութիւնն բերել յայն շաւիղ զոր անմահ Պատրիարքի ձեռքն նշանակած է: ... Այն քաղաքականութեան զոր ջատագովեցինք ի վերոյ, հետեւած էմք 1878էն ի վեր, և մտադիր էմք զայն պինդ բռնել: Հայք ողջմտութեան համբաւ կը վայելեն, նոքա դիւրաւ պիտի ըմբռնեն այս քաղաքականութեան բանաւոր կետերն, և չպիտի թերանան այնմ ոյժ տալէ իբրեւ լաւագոյն քաղաքականութեանն թուրքիոյ Հայոց համար:» (Տես թիւ 35:)

Զերազի այս խօսքերէն որոշ կը տեսնուի թէ նա հայաբնակ գաւառաց համար կը պահանջէ ոչ անկախութիւնն և «ոչ իսկ ինքնօրինութիւնն» (որպէս ուրիշ առթիւ յիշած է թերթին մէջ) այլ բարեօրէն վարչութիւն կամ բարեկարգութիւն, ընդ վեհապետութեամբ Սուլթանին: Զայս կը պահանջէ Պէռլինի դաշնագիրն ստորագրող բոլոր տէրութիւններէն առ հասարակ՝ յենլով նոյն դաշնագրի 61դ յօդուածին:

Գ

Ցայսվայր Զերազ անխոտոր հետեւած կը լինի Ներսիսի քաղաքականութեան, որոյ գլխաւոր երկու հանգամանքն են հաւատարմութիւն Բ. Դրան և միայն խաղաղ օրինական միջոցներու կիրառումն՝ հասնելու համար նպատակին:

Բայց 1878էն ի վեր 15 տարի անցած է և Ներսիսի մահուանէն ի վեր ալ 10 տա-

րի: Արդեօք միջազգային կացութեան և թրքի ու Հայու տրամադրութեանց մէջ այնպիսի փոփոխութիւններ մտած են յայնմ հետէ որ հարկաւոր գործեն մեր ևս ազգային քաղաքականութիւնն եղանակաւորելու: Զերազ երբէք ո՛րէ է չափով եղանակաւորե՞ր է իւր քաղաքականութիւն: Այդ որոշել բաւական դժուար է և փափուկ, քանի որ վերի յօդուածին մէջ կ'ըսէ թէ ինքն «բնաւ չեղած չէ Ներսէսի քաղաքականութենէն»:

Գոնէ տեղ մի կարծեմք թէ եղանակաւորութիւն մի ցուցած է, և բաւական նշանակելի եղանակաւորութիւն մի: 1891 Սեպտ. 15ի թուոյն առաջնորդող յօդուածին մէջ կայ կտոր մի (զոր անցեալ տարի կոչած էմք «Հայք»ի մէջ) յորում համակիր կ'երեւի Հայ Հայրենասիրական միութեանց յեղափոխական նպատակին: Այդ յօդուածի մէջ, որ խորագիր ունի «Ի խաղաղութեան և ի Պատերազմի» կը գտնեմք հետեւեալ նշանաւոր հատուածըն:—

«Այս թերթ (ԼԱռմէնի) ... լիովին կը բաւէ արտաքին աշխատութեան համար որ պարտի կատարուել յօգուտ ազգային գաղտին. գալով ներքին աշխատութեան, զայն կազմակերպելու գործն կ'իյնայ Մարսիլիայի «Արմէնիային» և իւր Միութեան, «Դրօշակին» և իւր նիզակակցութեան, «Հնչակին» և իւր կուսակցութեան, և մեր ուրիշ Հայրենասիրական ընկերութեանց: Եթէ այս ամեն մարմինք, ի մի ընդհանուր միութիւն ձուլուելով լինի՝ թէ իւրեանց եռանդուն մրցակցութիւնն շարունակելով, յաջողին մեծ ճգնաժամու պահուն գրաւել ինչ ինչ ռազմագիտական դիրքեր թրքական Հայաստանի մէջ, Հայք պիտի կարենան իրենց պայմաններն բռնի ընդունիլ տալ Դրան, և իրենց պահանջմանց յարգանք մտիկ պիտի ընեն լիազօրներն, քանզի ոչ ինչ այնքան պերճախօս է որքան կատարուած իրողութիւն մի: Արտաքին աշխատութիւնն և ներքին աշխատութիւնն լաւ կը կատարուին այսպիսի բաժանմամբ աշխատութեան, և ինչպէս «ԼԱռմէնի» վստահ է թէ ինքն համաբերձ պիտի գտնուի պարագայից, նոյնպէս վստահ է թէ բոլոր Հայրենասիրական միութիւնք համաբերձ պիտի գտնուին իրենց կոչման: Ուրեմն վստահու-

Թեամբ հրաւեր կը կարգայ հայ ժողովրդեան նուիրել նոցա իւր բարոյական և նիւթական աջակցութիւնն:» (Տես «Առմէնի» թիւ 34)

Զերազի այս խօսքեր չատ յստակ են, և մեկնութեան անկարօտ: Ներքին աշխատութիւն մի կայ զոր հայրենասիրական միութիւնք յանձն են առած, և ինք այնքան վստահութիւն ունի և համակրութիւն որ կը հրաւիրէ հայ ժողովուրդն նպաստել նոցա որպէս զի մեծ ճգնաժամական պահուն կարենան «ռազմագիտական ինչ ինչ դիրքեր գրաւել թրքահայաստանի մէջ» և լիտգօրներն ալ յարգել ստիպուին մեր պահանջներ:

Ուրեմն, ըստ Զերազի, յեղափոխական, բուն միջոցներու ևս պէտքն զգալի է, և արժան է կազմակերպել այդպիսի միջոցներ: Եւ այս յայտնապէս եղանակաւորութիւն մ'է, և շատ կարեւոր եղանակաւորութիւն, Ներսիսի քաղաքականութեան: Յիրաւի ինքն Զերազ արտաքին աշխատութիւնն յանձն առած լինելով՝ յեղափոխական ներքին գործին մէջ մատ չունի, բայց գործօն մասնակցութիւն չունենալով հանդերձ՝ ունեցած է համակրութիւն և յորդորած է որ ժողովուրդն աջակցի յեղափոխական միութեանց:

Դ

Զեմք կարող չլիչել սակայն մեր մեծայարգ պաշտօնակցին 1892 Հոկտ. 15ի մեծ յօդուածն, «Առ Մեր Հայրենակիցս» խորագրի տակ, ուր կ'ըսէ թէ. —

«Կրնամք պարծիլ ևս թէ ոչ մի Հայ գլխուն մէկ մազն կորուսած է մեր պատճառաւ, որ, հաւատարիմ աշակերտ Ներսէս Պատրիարքի, ոչ դաւ կը կազմակերպեմք և ոչ ապստամբութիւն:» (Տես «Առմէնի» թիւ 48)

Աւելորդ է ցուցնել այն յայտնի անհամաձայնութիւնն որ կայ այս յայտարարութեան և վերի յորդորանաց միջեւ:

Մեք չեմք կարող ենթադրել որ Զերազ իւր ներքին համոզումն և անկեղծ հայեցողութիւնն յայտնած չլինի ի յորդորելն որ հայ ժողովուրդն բարոյապէս և նիւթապէս օգնէ այն մարմիններուն որոց ձգտումն է՝ մեծ ճգնաժամուն ատեն՝ ռազմագիտական դիրքեր գրաւել Հայաստանի մէջ:

Ուրեմն կա'մ կարծիքն փոխած պէտք է լինի այն ատենէն ի վեր, կա'մ լեզուն: Դիւանագիտական ասպարէզի վերայ լեզու փոխել շատ սովորական բան է, և ըսուած որոշ խօսքերու անակնկալ մեկնութիւններ տալ ևս հասարակ դէպքերու կարգէն է: Կրնայ լինիլ որ հայ դիւանագէտն ալ, նոյն պահելով հանդերձ իւր ներքին համոզում, հակադիւանագիտական համարի իւր թերթի մէջ այնպիսի յեղափոխութիւն կարծիք հռչակել, և առաջին յայտարարութիւնն մոռցունել տալու նպատակաւ պնդէ թէ ինքն Ներսէս Պատրիարքի քաղաքականութեան ճշդիւ կը հետեւի:

Պէտք է ընդունիլ թէ օտարներու համար գրուած թերթի մի մէջ Զերազ չկրնար խօսիլ այն ազդուութեամբ որպէս պիտի խօսէր եթէ հայրենի թերթի մէջ գըրէր: Մինչև անգամ երբ «առ իւր հայրենակիցս» ուղղէ խօսքն, ստիպուած է ըզգուշաւոր լինիլ:

Բայց ուրիշ մեկնութիւն մ'ալ կարելի է: Կրնայ լինիլ որ Զերազ իւր կարծիք փոխած լինի յեղափոխական կամ բուն միջոցներու օգտակարութեան նկատմամբ: Կրնայ լինիլ որ յեղափոխական գործիչներու և միաբանութեանց յախուռն և երբեմն մնասկար և անխոհեմ ընթացքն տեսնելով՝ մտածած լինի թէ լաւ ևս է բնաւ յեղափոխական շարժում չլինի քան թէ այնպիսի ձախող եղանակօք և տարածամ լինի:

Եթէ այս ենթադրութիւն ճշմարիտ է, Զերազ ոչ այնքան յեղափոխութեան սկզբունքին դէմ խօսած կը լինի որքան մեր յեղափոխականաց դէմ: Եւ աւելի վստահօրէն պիտի ըսէինք թէ անշուշտ այսպէս է եթէ «դաւ» (complot) կազմակերպելու դէմ խօսած լինէր միայն և ոչ «ոտքի ելնելու» (insurrection) ևս գէմ:

Ուրեմն ստիպուած եմք ըսել թէ Զերազի ազգային քաղաքականութեան մէջ անորոշ կետ մի կայ մեզ համար, այն թէ արդեօք ինքն դիւանագիտական խաղաղ միջոցներով միայն դատն չահիլ կը յուսայ՝ ճիշդ որպէս Ներսէս կ'ընէր, և դէ'մ է բուն միջոցներու կամ յեղափոխական պատրաստութեանց, — թէ բուն միջոցներու պէտքն կ'ընդունի պատեհ ժամուն ու պատեհ տաղւոյն համար, բայց, վըստահութիւն չունի մեր այժմու յեղափո-

խական այլ և այլ մարմնաց վերայ:

Այս մասին մեք չեմք տեսներ իւր ուրոջ միտք, և անկեղծ չփոթութեան մէջ եմք: Այդ պատճառաւ խնդրեցինք իրմէ որ «Հայք»-ի մէջ յօդուածով մի ազատութեն պարզէ իւր քաղաքականութիւն: Մեզ պատասխանեց թէ «Կը ցաւիմ որ ժամանակի անձկութեան պատճառաւ, չը պիտի կարենամ գրել ձեր առաջարկած յօդուածն»: Կը հաւատամք թէ մեր պատպաշտօնակից յոյժ գրողեալ է, բայց և այնպէս չեմք կրնար չցաւիլ որ այսպիսի կարեւոր, կենսական խնդրոյ մի վերայ գրելու ժամանակ չկրնար գտնել: Այս մահու և կենաց խնդիր է: Մեք, բոլոր Հայքս, պարտութեամբ յամենայն մտաց աշխատիլ որոշել այն քաղաքականութիւն որ լաւագոյն է, և զայդ որոշելու համար պէտք է որ խօսին մեզ հեղինակաւոր անձինք, ինչպիսի է Չերազ: Կը համարձակիմք ըսել թէ Չերազ չկրնար ընաւ ցաւիլ եթէ իւր արտաքին գործերէն ժամանակ գողնալով՝ այդպիսի յօդուած մի գրէ ի իշխութիւն Հայ Հանրային կարծեաց և յօգուտ ներքին գործունէութեան:

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷ

Գահիրէ 14 Մարտ, 1893

(Գահիրէի վերջին անցից նկատմամբ ընդարձակօրէն խօսուած է «Հայքի» Մարտ 1ի թուոյն մէջ, որոյ չե ժամանած յեգիպտոս՝ այլ ոմն թղթակից գրած է մեզ նոյն դէպքերու վերայ: Այս վերջին նամակէ կ'առնուիմք միայն հետեւեալ կտորն:)

... Հակառակ Բագմաթիւ խելացի անձանց իրաւասիրական բարեյօժարութեան արով ուզած են վերջ մը տալ գործին, Տրովական պատերազմի վաւերականութեամբ գետ կը շարունակուի նախորդ և արդի վարչութեան և օժանդակ խորհրդոց վիշե թշնամական պաշտօնագրերու անվեցջ փոխանակումն, մինչդեռ այս նոգկալի դէպքին խաւարամիտ հնարիչք՝ պաշտօնական անառիկ պատուարներու յեցած դիւական ձիւծաղալ կան իզնին ճակատաբար մարտին:

Եւ երբ պաշտօնական բարձունքէ բը-

խելով ժողովրդային դաշտը խորխողող ու փեռեկող ցեխոտ հեղեղն և յերեսաց նորին ժողովրդեան մէջ տիրած յուզումն կը դիտէ մարդ, չկրնար չմաղթել որ երկնից արդարութիւնն այցելէ մեզ յանձին պատկառելի և իրաւաւէր անձնաւորութեանց ումանց, յորպիսեաց համարի է Մկրտիչ Մարկոսոֆ Պէյ, առեւտրայեւ թաղական խորհրդոյ, որ կ'աշխատի վախճան տալ այս գայթակղալի խառնաշփոթութեանց՝ ի գործ դնելով արդարութեան պահանջն և վերահաստատելով գրկեալ պաշտօնեաներն:

Մաղթենք որ այս տողերու «Հայքի» սուղ էջերուն մէջ երեւումէն առաջ առիթ ունենանք իրաւասիրութեան և անաչառութեան յաղթանակն տեսնելով միութարուիլ:

* * *

Ազգային

ԼՈՒՐԵՐ

«Նիւ Եորք Հէրալտ»-ի մէջ կը կարդամք.—

Լոնտոն, 10 Ապրիլ.— Չմիւռնիոյ, Տըրապիզոնի և Անատոլիոյ ուրիշ տեղեաց անգլիական հիւպատոսք յղած են առ բըրիտանական դեսպանն Կ. Պօլսոյ այն 1800 Հայերու անուանց ցանկն որք պէսպէս ամբաստանութեամբ բանտարկուած են իրենց հիւպատոսական սահմաններու մէջ: Հայոց հարստահարութեանց խնդիրն նորէն կարեւորութիւն կ'առնուի, և կը գրուցուի թէ Մեծն Բրիտանիա պիտի առաջադէտ որ եւրոպեան տէրութիւնք դեսպանաժողով մ'ընեն ի նկատ առնելու համար թերքաց յոռի վարչութիւնն ի Հայաստան:—

*

* *

Լոնտոնի «Սթանտարտ» թերթին Կ. Պոլսոյ թղթակիցն գրած է հետեւեալն.—

Երբ որ Բ. Գուռն չհաւնի ու է քըննադատութեան որ իւր զանցառակիւն և գործադրական բացում մեղաց մասին կ'ե-

րեւնայ եւրոպական մամլոյն մէջ, կը դիմէ դեսպանաց որ սոքա օտար թղթատներն արգելուն այս ինչ թերթին այն նիշ թուոյ կամ թուերուն յանձնումն: Սթանտարտի այս ինչ արգիլեալ թիւերն կարգացի և չկարացի տեսնել թէ դիւրազգայ տէրութեանց այս դիւրազգայագոյնն ինչ կրցած է տեսնել անդ իրեն անհաճոյ:

Ատենէ մ'ի վեր աստ հանրութեան մէջ քաջ դիտուած է թէ, հրապարակաւ խօսելու աստեն, դեսպանք կը թուին մըրցիլ իրարու հետ թէ որն զՍուլթանն նու աստաբար շողոքորթելու գափինն պիտի ընդունի, սակայն աւելի խղճալի է տեսնել որ Դրան տղայական գրաքննութեան օգնական լինելն իրենց դիւանագիտական պարտուց յաւելուածն նկատեն:

*

* *

Միացեալ Նահանգաց ներկայացուցիչըն Բ. Դրան բողոքած է Մարսուանէ հիւպատոսական կնքոյ տակ իրեն յղեալ նամակաց բացման դէմ:

*

* *

Մարսուանի ամերիկեան գովէճին ուսուցչապետ թումայանն ևս քաղաքին հայ բանտարկելոց թուոյն մէջ է:

*

* *

Կ. Պոլսէն գրուած առանձին նամակաց մէջ ըսուած է թէ Կեսարիոյ յուզման ատեն Հայեր ինքնապաշտպան եղեր են և զինու զօրութեամբ դէմ դրեր են թուրք խուժանին, այնպէս որ 75 հոգի ինկեր են երկուստեք: Կեսարիայէ գրուած ուրիշ առանձին նամակի մի մէջ զոր ստացողն ներկայացուց մեզ, ըսուած է թէ Հայեր տներէն դուրս ելնել չեն համարձակիր: Ըսել է խանութներն դեռ չեն սկսած բացուիլ:

*

* *

Խարբերդու Խուլու գիւղէն կը գրեն թէ Ամերիկայէն նոր վերադարձած Հայու

մի տունն Գրդեր մտեր են գիշերայն գողութիւն ընելու, որոց դիմագրած է Հայն և ըրվովքի հարուածներով հալածած է չարագործներն: Ինքն ալ ընդուներ է դաշունի հարուածներ, որանցմէ բժշկուելու վրայ է, սակայն Գրդերէն մին, տուն հասնելէն յետոյ, սատկեր է գնտակի մի վէրքէն զոր արձնապաշտպան Խուլուցին տուած է լեռնցիին:

*

* *

Փարիզի «Թան» Լրագիրէն կը տեղեկանամք թէ Մալաթիոյ 10,475 տներուն 2,885ն բողոքովին կործաներ են երկրաշարժով որոյ մասին խօսուած է «Հայքի» նախորդ թուոյն մէջ: 5,690 տուն ալ կիսով չափ աւերեր են, 1,900 տուն ևս անբնակելի դարձեր են: 123 խանութ իրենց պարունակութեամբ մէկտեղ, աւերակաց կոյտ դարձեր են, և 800 խանութ ալ ըստ մասին փնասուեր են: Մեռնողներու թիւն է 130, վիրաւորացն՝ 54:

*

* *

Կ. Պոլիս, Բերայի փողոցին մէջ, ցերեկ ատեն, երեք թուրք զինուորներ յարձակեր են Խտալական պաշտօնէի մի կնոջ վերայ անցեալներ: Խտալական դեսպանն դիւանագիտական փոխարինութիւն կը պահանջէ Բ. Դռնէն:

*

* *

«Հայքի» խմբագիրն չկարաց այցելել Ուսթըր, սակայն Նիւ Եորքէն յատկապէս գնացած և իրաց վիճակն քննած Հայրենակիցներու երկուքն տեսաւ և բաւական ճիշդ գաղափար ձեւացուց: Տեղւոյ անձկութեան պատճառաւ յառաջիկայ թուոյ կը թողու Ամերիկայի Հայոց և Ուսթըրի յուզմանց վերայ իւր ընդհանուր տեսութիւն ընել:

Սաչափն արժան է այժմէն ըսել թէ Ուսթըրի «Թեւեկրամ» թերթին տեղեկագրութիւնք կատարելապէս ճշգրիտ լինելէ հեռի են, նայելով այցելուաց մեզ պատմածներուն:

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Ե.Օ.ԳԵՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՁ

ԿԵՆՍԵ ԸՊԸ ՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէն, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէն, եթէ պայմանն հազար թալէն է, կամ մինչև հինգ հազար թալէն, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անդհկութիւն տալ

Շնորհակալութեամբ ստացանք ՈւրԱՐՍ Վեցամսեայ Պատկերազարդ Հանդիսի 1892 տարուոյ Բ. թիւն՝ ընտիր պարունակութեամբ:

ԱՐԱՔՍ, ի մէջ այլոց, կը պարունակէ զպատկեր Կիւլիզարի և զԳրիգոր Արծրունւոյն: Ուշագրութեան արժանի է Տ. Խորէն Նարպէյ Արքեպիսկոպոսի մասին պոլսական թղթակցութիւնն, որ անաչառ գրչի ծնունդ կ'երեւի, և զպատրիարք Ալըգեան կը հարուածէ ըստ արժանւոյն:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան: Բազում ձեւերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէն կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք» ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս. Բ. տարի 2 տողար կամ 10 ֆրանք

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. էվինիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7դ. էվինիու Նիւ Եորք
27դ. և 28դ. Փողոցներուն միջև

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

A. A. McLAUGHLIN
137 MAIN ST.
WORCESTER, MASS

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ
և ամեն շաբաթ երեկոյ Հայազգի վաճա-
ռող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ
որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու
կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլ-
խարկ, վերարկու, սոնազգեոտ (փանթո-
լոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին
ամենուն համար մէկ է եւ Հափաւոր է.
Եկէք եւ տեսէք:

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Ք Ե Ղ Ե Ք Ո Ր Ն

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
Հափաւոր գնով

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԻԿԵՆԻՔՍ ՍԵՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողու-
թիւններն կրնան ապահովապէս դնել վե-
րոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը
ճարէ Յուսկար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ.
ամսոց կէսէն հաշուելով:

HOPKINS & ATKINS
Washington, D. C. 20
years' experience
write for information

PATENTS



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Bilioousness, Headache, Consti-
pation, Dyspepsia, Chronic Liver Troubles,
Dizziness, Bad Complexion, Dysentery,
Offensive Breath, and all disorders of the
Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to
the most delicate constitution. Pleasant to take,
safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail
on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston, Mass

ԵՂԻՄԻՐ Յ. ԷՔԻՂԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Դէորբ Էքիզեան

KRONOFF & OLDSSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS
ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱԶԱՌ

214 Main St.
WORCESTER MASS.

Տ Պ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. ԴԱՐԲԻԷԼԵԱՆ